

# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 10-ին, շաբաթ օր, սրբոց թարգմանչաց վարդապետաց տոնի առթիվ, երեկոյան ժամերգությունից առաջ, Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանին, որն ուխտավորաբար գտնըվում էր Մայր Աթոռում։

Հանդիսության ներկա էր նաև Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը։

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը ծնվել է 1932 թվականին Հալեպում (Սիրիա)։ Նախնական կրթությունն ստացել է Հալեպի ազգային Հայկազյան վարժարանում և այն ավարտել 1946 թվականին։

1947 թվականին ընդունվել է Անթիլիասի դպրեվանքը, որի 6-ամյա դասընթացն ավարտել է 1953 թվականին և նույն տարվա հունիսին կուսակրոն քահանա է ձեռնադրվել հանգուցյալ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի ձեռքով։

1956 թվականի օգոստոսին ներկայացնելով «Մայր ցուցակ Անթիլիասի հայկական ձեռագրաց» իր ավարտաճառը, մասնավոր վարդապետական իշխանության 4 աստիճաններ է ստանում գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանից։

1959 թվականին ընդունվում է Անգլիայի Դուրհամի համալսարանը, մասնագիտություն ընտրելով արևելագիտությունը։

1962 թվականին ստանձնել է Ավստրիայի և Գերմանիայի հայ համայնքների հովվական պաշտոնը՝ Վիեննայի հայոց եկեղեցական վարչության հրավերով և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հաստատումով։

1964 թվականին ավարտելով համալսարանը, հուլիսին ներկայացնում է իր դոկտորական աշխատությունը՝ «Հայ ժողովուրդի մասնակցությունը հանրային կյանքին Արևելյան Անադոլուի և Սուրիո մեջ, 1860—1908 թվականներուն» և հաջողությամբ պաշտպանելով իր թեզը, Դուրհամի համալսարանի կաճառի կողմից ստանում է «մագիստրոս փիլիսոփայության» տիտղոսը։

1964 թվականին հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, նշանակվում է Հայ Եկեղեցու մնայուն ներկայացուցիչ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ։

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանը հավատավոր, իր կոչման նվիրված, զարգացած և հայրենասեր հոգևորական է։

Նա գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, մագիստրոսության տիտղոս և ծայրագույն վարդապետական աստիճան ստանալու առթիվ, սրտագին շնորհավորում է հոգեշնորհ Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանին, մաղթելով նրան նորանոր հաջողություններ այն խոր հավատով, որ նա իր հետագա ծառայություններով և նվիրումով կարդարացնի հայրապետական բարձր վստահությունը։